Կցեք ձեր սմարթ հեռախոսին Կալիֆորնիայի ծանուցման համակարգը

Վարակակակիր անձանց հետ շփման մասին ծանուցող համակարգ

Դուք կարող եք պաշտպանել ինքներդ ձեզ և համայնքը COVID-19 վարակից: Միացեք պայքարին ձեր հեռախոսով:

Դա հեշտ է: Գաղտնի է: Անվտանգ է: կատարվում է 100% կամավոր մասնակցության հիմունքներով:

Ինչպես է այն աշխատում

- Կալիֆորնիայի ծանուցման համակարգը բացառապես կամավորական հիմունքներով գործող և անվտանգ գործիք է, որոն օգտագործվում է մարդկանց իրազեկելու համար, եթե նրանք շփում են ունեցել COVID-19-ով վարակակիր անձանց հետ:
- Ձեր գաղտնիությունն ապահովված է: Ձեր ինքնությունը չի բացահայտվում, և ձեր գտնվելու վայրը չի հետախուզվում:
- Կալիֆորնիայի ծանուցման համակարգն օգտագործում է Bluetooth տեխնոլոգիան համակարգն օգտագործող այլ անձանց հեռախոսների հետ տարբեր ծածկագրեր փոխանակելու համար:
- Դուք կստանաք անանուն նախազգուշացում միայն այն դեպքում, եթե սերտ շփում եք ունեցել Կալիֆորնիայի ծանուցման համակարգն օգտագործող որևէ անձնավորության հետ, որի COVID-19-ի թեստավորման պատասխանը դրական է եղել:
- Դուք ինքներդ կարող եք որոշել անանուն ծանուցում ուղարկել որևէ Կալիֆորնիայի ծանուցման համակարգն օգտագործողի, եթե ձեր թեստի պատասխանը դրական եղել:

Ինչպես մասնակցել

- օգտագործողները կարող են անմիջականորեն ակտիվացնել Կարգավորումներում գտնվող Շփման մասին ծանուցումներ.
  - » Քայլ 1: Բացեք Կարգավորումներ հավելվածը
  - » Քայլ 2: Սահեցրեք ներքև մինչև Շփման մասին ծանուցումներ
  - » Քայլ 3: Ակտիվացրեք և ընտրեք Միացյալ Նահանգներ ու Կալիֆորնիա
- Android օգտագործողները կարող են ներբեռնել Կալիֆորնիայի ծանուցման համակարգը Google Play-ով և հետևել հուշումներին, որպեսզի ակտիվացնեն այն:



Եթե ձեզ օգնություն է հարկավոր ձեր հեռախոսում հավելվածն ակտիվացնելու համար կամ ունեք հարցեր, ապա

Զանգահարեք: 1 (888) 421-9457

Այցելեք CaNotify.ca.gov կայքէջը ավելի շատ տեղեկություն ստանալու համար:

Դեկտեմբեր, 2020թ. • © 2020թ., Կալիֆորնիայի Հանրային առողջապահության դեպարտամենտ